# ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Հանձնվում է նախնական կալանքի տակ գտնվող անձին, քննչական դատավորի գործի (դատարան ուղարկման) որոշումից հետո

Դուք նախնական կալանքի եք ենթարկվել ազատությունների և կալանքի դատավորի կողմից, այն դեպքում, երբ դուք ուղղարկվել էիք միջին ծանր հանցագործություններով զբաղվող դատարան կամ (քրեական) ծանր հանցագործություններով զբաղվող դատարան: Այս փաստաթուղթը հիշեցնում է այն հիմնական իրավունքները, որոնցից դուք օգտվելու էք եւ այն հիմնական տեղեկությունները, որոնք պետք է տրվեն ձեզ:

***Դուք կարող եք պահպանել այս փաստաթուղթը ժամանակավոր կալանքի տակ գտնվելու ամբողջ ընթացքում***

### Հանցագործության եւ դատավարության ամսաթվի տեղեկություն

Դուք իրավունք ունեք իմանալ ենթադրյալ հանցագործության կատարման անունը, ամսաթիվը և տեղը, որի համար ենթարկվել եք հետաքննության: Դատարանի առաջ ձեր ներկայանալու ամսաթիվը պետք է ձեզ հաղորդվի, եթե այն սահմանվել է:

### Իրավաբանի օգնության մասին

Դուք կարող եք խնդրել, որ ձեզ աջակցի ձեր ընտրած կամ ավտոմատ կերպով նշանակված իրավաբանը:

Դուք կարող եք ազատ շփվել բանավորու գրավորկերպով ձեր իրավաբանի հետ, ու նա կարող է մասնակցել ձեր բոլոր լսումներին (դատարան ներկայանալու ժամանակ), որոնց մասին նրան պետք է տեղեկացնեք: Նա կարող է Ձեր անձնական գործի փաստաթղթերն ուսումնասիրել:

### Լռություն պահելու իրավունքը

Ձեր լսումների (ձեր դատարան ներկայանալու ժամանակ) ընթացքում, դուք կարող եք կամ հայտարարություններ անել, կամ պատասխանել ձեզ տրվող հարցերին, կամ լռել:

### Թարգմանչի աջակցությունը

Եթե դուք չեք խոսում կամ հասկանում ֆրանսերենը, դուք իրավունք ունեք օգտվել թարգմանչի անվճար օգնությունից՝ ձեր լսումների եւ ձեր փաստաբանի հետ շփվելու նպատակով.

## Ձեր ազատման իրավունք խնդրելու մասին

Ցանկացած ժամանակ, դուք կարող եք խնդրել ձեզ ազատ արձակել: Այդ խնդրանքը կքննարկվի ուղղիչ դատարանի առաջ եթե միջին ծանր հանցագործության համար եք հետապնդվում կամ քննչական դատարանի առաջ, եթե ծանր հանցագործության մեջ էք մեղադրվում:

## Ազատազրկման տևողությունը

Ձեր նախնական կալանքի տակ դրվելուց սկսած, ձեր ներկայանալը համապատասխան դատարանի առաջ պետք է տեղի ունենա նախքան երկու ամիսը լրանալը, եթե ձեզ ուղղարկել են ուղղիչ դատարան և նախքան մեկ տարին լրանալը, եթե ձեզ ուղղարկել են ծանր հանցագործություններով զբաղվող դատարան:

## Որոշ անձանց տեղեկացնելը

Դուք իրավունք ունեք տեղեկացնել այն մարդկանց որոնց ցանկանում եք, հատկապես ձեր ընտանիքի անդամներին, այն մասին, որ ժամանակավոր կալանքի տակ եք գտնվում:

Եթե դուք օտարերկրի քաղաքացի եք, դուք կարող եք բացի այդ տեղեկացնել մեկի միջոցով ձեր երկրի հյուպատոսական իշխանություններին:

## Բժշկական քննության մասին

Դուք կարող եք խնդրել զննվել բժշկի կողմից:

## Ծանոթանալ ձեր անձնական գործին

Դուք իրավունք ունեք ստանալու ձեր դատական գործի պատճենը, անհրաժեշտության դեպքում, էլեկտրոնային (թվայնացված) տարբերակով: